ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-75-51,
էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ _____

«___» _____2025

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և Գոռ Նիկողոսյան ԱՁ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 25.07.2025 թվականին կնքվել է պետության կարիքների համար ապրանքների մատակարարման N ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1-1 ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում Գոռ Նիկողոսյան ԱՁ-ն մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը պետք է մատուցեր դյուրակիր համակարգիչներ և համակարգչային ստեղնաշարեր, սակայն նշված ժամկետում այդ ապրանքները չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է ապրանքների մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը,

սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գոռ Նիկողոսյան ԱՁ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը միակողմանի լուծում է 25.07.2025 թվականին կնքված ՄԻՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/8-1-1 ծածկագրով պետական գնման պայմանագիրը, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 76 500 /յոթանասունվեց հազար հինգ հարյուր ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 114 750 /մեկ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000664 հաշվեհամարին:

Պայմանագրի չկատարման արդյունքում առաջացած 225023 /երկու հարյուր քսանհինգ հազար քսաներեք/ ՀՀ դրամ տուգանքը և 22502,35 /քսան հազար չորս հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ տույժը անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության 900011023067 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ կետի «ա» ենթակետի՝ Անհատ Ձեռնարկատերը կներառվի գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հարգանքով՝

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂՈՅԱՆ

Ֆինանսատնտեսագիտական և գնումների
ապահովման վարչություն
Կատարող՝ Կարինե Հովհաննիսյան
Հեռ.՝ (010) 53-94-48